—Դու պահը ես պահում, ցոյց առւր գործերովք: Թող պահեն ոչ միայն շրթունքներդ, այլ և տեսողութիւնդ, լսողութիւնդ, ոտքերդ, ձեռքերդ և մարմնիդ բոլոր անդամները: Թող ձեռքերդ պահեն յափշտակութիւնից և ընկերոջդ հասցնելիք: Թող պահեն և ականջներդ, իսկ ականջի պահը այն է, որ չլսեն չարախօսութիւն և զրպարտութիւն: Պահիր և աչքերով, տեսութիւնը աչքերի կերակուրն է: Դու միս չես ուտում: ուտիք կերակուր չես ճաշակում: մի՛ ճաշակիր նաև տեսողութեամբ: Թող և լեզուն պահէ՝ հեռու լինի հայհոյութիւնից և զրպախօսութիւնից: Ինչ օգուտ կերակրի պահեցողութիւնից, երբ մենք թէկ չենք ուտում թուշուն և ծուկն, իսկ մեր մերձաւորներին կրծոտում ենք և ուտելով ուտում:

Տայ Աստուծ, որ մեր պահը լինի այնպիսի պահը, որի ժամանակ մենք կարստանք փախուել դէպի բարին և երջանիկը: Այդպիսի փախութիւնը կլինի նաև ամենահաճելի հարկ կայսեր և նրա ցանումը կրանայ ողորմութիւն դէպի մեզ: Իսկ Աստուծացին ողորմութիւնը մեզ հետ կլինի մինչև յաւիտեան:

Յովհանը վերջացրեց: Ժակովուրքը արդէն վաղուց հանգուտացած նրա սիրալիք քաշողից, նրա խօսելու հաստատում և Ժիր եղանակից, սկսեց ժամանակել նրան: Արևելեան թեթեամբ ասորի ամբոխը այժմ աւելի մտածում էր Յովհանի ճառի գեղեցկութեան, քան ըսվանդակութեան մասին: Յովհանը ձեռքի շարժումով իշխանաբար հանդարտեցրեց ամբոխի ժամանակութիւնը և առաց:

—Ելեղեցին հանդիսավայր չէ, որտեղ գուք լսէք միմիայն բաւականութեան համար: Այստեղից պէտք է գուրս դալ միշտ խրատուած, որևէ կարեսը օգուտ ձեռք բերած: Բոլորովին գատարկ բան է և ի զուր մեր այստեղ գալը, եթէ առ ժամանակ պատուէը ընդունելով՝ այստեղից գուրս կդաբ առանց որ և օգուտ ոտանալու:

Ինձ ամեննեին չի ուբախացնում ձեր ծափահարութիւնը: Էնչիսի է պէտք ձես գովասանքն ու համակրական ցոյցերը: լինձ համար պարձանք և ուբախութիւն է այն, որ գուք ձեր գործերով արդարացնէք իմ բոլոր խօսքերը, գործադրէք նրանց ձեր կեանքթում այն ժամանակ միայն բազդաւոր և երջանիկ կհամարեմ լինձ ստանալով իմ բարի համբաւը, անունը: Հէնց որ տեսնեմ, որ դուք ապրում էք բարեպաշտ և քրիստոնէավայել կեանքով՝ ես ստացած կլինեմ ամեն ինչ: Ուստան ձեր հոգու հրամականքը արտայայտեցէք ոչ թէ ծափահարութիւններով և աղաղակ բաձարցնելով, այլ ձեր լուսավառուած սրտերով, ձեր կեանքի մաքրութեամբ, արդարութեամբ և ողորմածութեամբ: Եւ ոչ միայն ձեր, այլ և ձեր բոլոր ընտանիքների: Նատերի հետ պատճենում է, որ մարդագետնից կամ պարտէզից հեռանալիս իրանց հետ առնում են վարդ, մանուշակ կամ որ և է այլ ծաղիկ և տուն են բերում: Ուրիշները պարտէզից բերում են պտուղներով ծանրացած ծիւղերը: Ումանք էլ փարթամ ճաշկերութից յետոյ իրանց մերձաւորներին բերում են որ է քաղցրաւենիք: Այդպէս և գուք եկեղեցուց հեռանալիս ձեր այստեղ զարթած մտքերն ու գուցմունքները ձեզ հետ ատքէք տուն—ձեր կանանց, որդոց, ազգականներին, ծառաներին) բոլոր ձեզ մօտ ապրողներին, որպէս հրաշալի ծաղիկներ, որպէս լաւագոյն քաղցրաւենիք: Այն ժամանակ ձեր ընտակարանները կբառնան Աստուծացին գեղեցկույն պարտէզներ, իսկ ձեր կեանքը՝ Աստուծացին հրաշալի խնջոյք: Դնացէք խաղաղութեամբ:

Ներունի Ֆլատիանը չնայելով որ շտապում էր, բայց չկարողացաւ Անտիոքից ուղարկուած ոուրհանդակներին հառնել: Վերջիններս՝ չնայած Տաւրոսի վրայ կուտակուած ձիւնին եպիսկոպոսից մէ քանի օր առաջ տեղ հասան և Անտիոքում պատճաճ խովութեան մասին յայտնեցին Կայսեր: Թէոդոսը կատաղեց արեւնը երեսը խփեց: Նա ցանումից դուշում էր և բռունցքները սեղմելով ճշում էր ատամների արանքից:

— Ի՞նչպէս: և իմ հանգուցեալ կնոջը, իմ անդինս, ամենասիրելի էակի՞ս, նըս՞ն էլ են վերաւորել, անպատճել: Ծաղ-

բԵլ են և իմ հանգուցեալ հօր արձանը լ՛ոչ էին արել նրանք յանդուգն, խաժամուժ ամբոխին: Ո՞հ Անտիոքը շատ թանգ կհատուցանէ ինձ: Այստեղ վողոցներում խռովարաները քարշ են տուել իմ արձանները, ես նրանց մարմինները քարշ կտամ նոյն փողոցներում: Եւ արեան հեղեղներով կմաքրեմ ցեխի ամեն մի կաթիլը, որով նրանք պղծեցին սուրբ արձանները:

Հետեւեալ օրը երկու կայսերական բարձրտուտիման անձինք՝ ելլերին և Կեսար Պոլիսից ուղարկուեցան Անտիոք: Նրանք կնքած ծրարներով տանու մ էին վճիռը, որը պէտք է առջն ու տեղը, Անտիոքում, յայտարարէին:

Ճանապարհին նրանք պատահեցան Ֆլաւիանին: Կարճ ողջոյնեց յետոյ իմացան թէ ովկէ գնացողը, ուր և լ՛ոչ նպատակով: — Ո՞հ, Սրբազն հայր, դու ուշացար, առացին էլլերին և Կեսարը, Կայսրը արդէն իւր կամքը յայտնեց և մենք վճիռը տանում ենք Անտիոք: Գնանք միտուին յետ. Կ. Պոլոսում դու ոչինչ չես կարսդանայ անել:

— Ես, ճշմարիտ է, ոչինչ չեմ կարող անել, բայց Առտուած կարող է, հեղութեամբ պատասխանեց Ֆլաւիանը, Առտուած ըռնեց Արքահամի գանակից, երբ նա արդէն բարձրացրել էր կապուած Խսահակի վրայ: Եթէ Առտուուն համելի լինի այժմու էլ կը ունէ այն դանակից, որը բարձրացաց է լիեզջ Անտիոքի վրայ: Ուրեմն դուք գնացէք Անտիոք Կայսեր կատարելու, իսկ ես կգնամ Պոլիս ինձ ուղարկող Առտուուն կամքը կատարելու: Միայն աղաւում եմ, երբ սկսէք Կայսեր կամքը ի կատար ածել, մի՛ մուանաք և Առտուուն կամքը: Թող ինքն Առտուած ձեր քայլերը ուղարկէ Կայսեր և նրա մարդկանց բարիքը: Ելլերին և Կեսարը քրիստոնեայ էին և Ֆլաւիանի հանդիպումը զօրեղ տպաւութեւն թողեց նրանց վրայ: Նրանք երկար ժամանակ առաջ էին գնում լուռ, խոր մտածման մէջ ընկղմուած:

— Ինչի՞ վրայ ես մտածում, հարցրեց Կեսարը

— Ետա բանի վրայ: Կայսեր, Անտիոքի, Ֆլաւիանի, ինձ, վրայ: : Գիտե՞ս, Կեսար, ես կցանկացի հէնց այժմու լինել Ֆլաւիանի տեղ և գնալ Պոլիս իրու Առտուուն կամքի պատագուածութեւնը: Եւ այս այս ծրարներով Անտիոք դնալ:

Կեսարը ի խոր որտէ հառաչեց:

— Ես էլ նոյն մտքին եմ: Ես այժմ միայն հասկացայ, թէ որպիսի մեծ միտք կայ Տէրունական աղօթքի այս խօսքերի մէջ. «Եղեցին կամք քո», որպէս յերկինս և յերկրի». և որպիսի անդունդ այստեղ, երկրի վրայ, Առտուուն կամքի և մարդկային կամքի մէջ:

Արևելքում լուրերը զարմանալի արագութեամբ են տարածում և ժողովրդի ասէ-կօսէն ելլեթեթից և Կեսարից շատ առաջ տեղ հասաւ: Անտիոքում նրանց գալուց մի քանի օր առաջ լուր տարածուեց, որ ֆլաւիանը ուշացել է, որ գալիք են թագաւորական աստիճանաւորներ և արիւնալի վճիռ պէտք է կայացնեն:

Սարսափ տիրեց քաղաքին: Ժողովրդին թւում էր, որ Թէռոսի ցաման պատգամաւորները արդէն մօտ են և շուտով կսկսեն գործել կախաղանները: Ասում էին, որ մօտենում են նորանոր զօրագնդեր և որ պիտի սկսուի քաղաքացիների միահամուռ կոտորած: Բոլորը գիմեցին Մայր Եկեղեցի՝ այնտեղ թագ կենաւու, սեղանի հոգանու ներքոյ պաշտպանութիւն գանելու համար: Սաստիկ իրարանցում ընկաւ: Մարդիկ ընկնում էին, խեղդւում, իսկ ամբոխը նորանոր խմբերով ներս էր խուժում սաստիցացնելով նեղուածքը:

Եկաւ քաղաքապետը և սկսեց ահաբեկուածներին հանգըտացնել: Նա երգւում էր որ առ այժմ ոչինչ վտանգ չկայ, որ գեր և ոս ոչինչ յայտնի չէ, որ զօրքի մասին ինքը ոչինչ չէ լսել: Ժողովրդուրդը հանդարտուեց և ցրուեց:

Ո՞յն ժամանակ Յովհանը գիմեց ունկնդիրներին նոր ճառապէլ: Նա առաց:

— Ես արդէն քաղաքապետին շնորհակալութիւնու յայտնեցի նրա հոգատարութեան համար, որ լինելով հեթանոս, եկաւ այստեղ (Եկեղեցի) և ձեզ հանդասացը եղաղաղացուցիչ յոյսեր տալով: Բայց ձեր տեղ ես շատ ամաչեցի նո չգետէլ թէ ինչպէս պահուեմ ամօթուց: Ես պէտք է կարմրէլ, որ այնքան շատ և երկարատես Եկեղեցական քարտուներից և հոգեւոր միթթարութիւններից յետոյ հարկ եղաւ արտաքին սփոխման, քաղաքական եշխանութեան լիրատին: Ո՞յն ժամանակ ինչ միտք ունի ձեր այստեղ հաւաքուելը և քրիստոնէական կեանքի լուսաբանութիւնը լսելը: Միթէ լսողութիւններիգ հաճոյք պատճառելու համար միայն: Եթէ դուք այստեղ լինանում էք կենդանի աւետարանական ջրով, իսկ տաւն էք գառնում գատարի և կեանքի մէջ գործում էք չոր ու ցամաք հոգւուվ, լ՛ոչ օգուտայդ լիութիւնից: Ըմբշամարտին ցոյց առւր ոչ թէ խրատ լուսիս, այլ գոտեմարտի ժամանակ. նոյնպէս և ջիրմեռանդութիւն ցոյց առւր ոչ թէ միայն ուկնդրութեան, այլ և գործունէութեան ժամանակ:

Ո՞ւր է ուրեմն ձեր հոգու տոկունութիւնը, ձեր քրիստոնէական արժանապատւութիւնը, ձեր հաւատը առ Աստուած և անձնութեան դէպի նրա կամքը: Զեղ համար քաղաքա-

պետի խօսքը աւելի ոյժ և ներգործութիւն ունի, քան Արարաշի խօսքը: Զեր խղձի խաւարը և ձեր հոգու մէջ Աստուածային արգարութեան պայծառ երեսի սրողուելը աւելի քիչ, քան ձեզանից դժգոհ քաղաքապետի երեսի ստուերը: Եւ գուք վախենում էք ոչ թէ հոգու նեղուածքից և մեղքի կապանքներից, այլ բանդարգելութիւնից: Ամեն օր հոգու ով մեռնելով և անհոգութեամբ ձեր մէջ Աստուածուն սպանելով՝ գուք սարսափում էք մարմնի մահից: Նայեցէք նրան որ գրել է իւր մատին «Ես Պողոս, կալանաւոր եմ ի Քրիստոս» (իմիւապ. ա.) և սոլորեցէք նրանից: Նրա համար մի սարսափելի բան կար միայն—անջատուել Քրիստոսից, իսկ մնացեալ բոլորը, որ սրան չէր վեճաբերում, նա ոչ ցաւալի էր համարում և ոչ հաճելի: Այն բռնաւորները և ժողովուրդները, որոնք չնչում էին ցասումով, նրան թւում էին իրեւ մոծակներ, իսկ մահը և անհամար տանջանքները տղայական խաղալիքներ. բացի այն դէպերից, երբ նա տանջանք էր կրում Քրիստոսի համար, այն ժամանակ նա հրճում էր իւր կապանքներով այնպէս, ինչպէս Թագաւորը՝ իւր սոկեղին թագով: Նա նոյն իսկ բանդում ապրում էր ինչպէս երկնքում: Եւ վէրքեր ու գանակութիւններ ընդունում էր տւելի բաւականութեամբ, քան ուրիշները ընդունում են պարզեներ: Դրա համար էր որ Փեստոսի մօտ գատի գալով, նա գուրս եկաւ գերելով զատաւորի սիրած: Այդպէս պէտք է լինէն և այսօր: Պէտք էր և քաղաքապետը զարմանար ձախորդութեան ժամանակ ձեր ցոյց տուած ազնիւ արիւթեան վրայ և այստեղից հեռանար ձեր վարք ու բարեկց գատ առնելով: Իսկ գրա փոխարէն նա խրատում էր ձեզ, մէկ հանգարտեցնում, մէկ յանդիմանում ձեր այդ անժամանակ և անմիտ երկիւղի համար: Մենք, քրիստոնեաներո, ինչպիսի աչքերով պիտի նայենք անհաւատների վրայ, երբ այդպէս վախկոտ ենք: Ի՞նչ լեզուով պէտք է խօսնեք և համոզենք նրանց չլախենալ առաջիկայ ձտիսորդութիւններից, երբ մենք այս խառնակութեան ժամանակ նապաստակց էլ երկշոտ դարձանք:

Ունկնդիրները շփոթուած ցրւում էին տները և աւելի հանգիստ սրտով սպասում էին կայսերական աստիճանաւոր ներին: Սակայն վրդովմունքը չանցկացաւ: Ամեն մարդ բերում էր մի նոր լուր և Աստիքին տիրում էր մէկ վախ ու սարսափ, մէկ յոյս և հանգստութիւն. վերջապէս ևլլերինը և կեսարը եկան:

Նրանք քաղաք մտան մեծ զօրքի գլուխ անցած: Անտիոքի վրայով սոսկում անց կացաւ: Փողոցները լիքն էին ժողովրդով, բայց ամեն ինչ լուս էր: Մարդիկ զգում էին որ փոթորիկ է

մօտենում, որ նա արդէն վրայ է հասնում, կախուած է, բայց չգիտէին թէ ում և ինչպէս պիտի կարծանէ:

Ա. Ամենավատ հետեանքի էին սպասում:

—Արդեօք այս գործին կայսրը ինչպէս նայեց, հարցնում էին կլիբեխին և կեսարին տեղական իշխանաւորներից ժանօթները:

—Վատ, Կայորը սաստիկ զայրացած էր:

—Ի՞նչ պատիժներ են նշանակուած.

—Գիտենք, հրամանը կնքած է: Կարգադրուած է հրապարակում բաց անել և կարդալ: Կարծում ենք լաւ բան չի գուս գալ:

Հազարաւոր սպազգեստ, գունատ գէմքով ամբոխը բռնել էր կուսակալի, տան առաջի ամբողջ հրապարակը:

Լլիթելիք և կեսարը բարձրացան պատրաստած ամբխնի վրայ, ծրարբ բաց արին և սկսեցին կարդալ:

Ա. Անտիոքը զրկուում է իւր բոլոր արտօնութիւններից և անցնում է հասարակ քաղաքների կարգը: Արևելքի մայրաքաղաք է ընտրւում Կառղիկէան:

Բ. Թատրոնները, կրկէսները բազանիքները և այլ գուարանութեանց տեղերը փակւում են. Գաֆնան, Անտիոքի պարձանքը, մատնւում է լուութեան:

Գ. Ժողովրդին, կատարեալ ազգատներին, կրծաւում է ձրի հաց տալը, ինչպէս այդ լինում էր առաջ՝ նման Պոլտին և Հոռմին:

Դ. Առաջադրուում է գործի նոր և խստագոյն քննութիւն: Բոլոր յայտնի մարդկանց ըւնել և շղթայակապ անել: Կասկածաւորներին տանջանքի ենթարկել և յանցաւոր գուրս եկածին անյապազ մահուան գատապարտել:

Ամեն մի որոշումը ամբոխը լսում էր, որպէս կայծակի հարուած:

—Անտիոքը մայրաքաղաք չէ. Խայտառակութեն, ստառութիւն ամբողջ Արևելքի առաջ:

—Փակուած են բազանիքները, կրկէսները, թատրոնները, ևլլուած բոլոր զուարձութիւնները:

—Հացի բաշխում ևս չէ լինելու: այս ի՞նչ է. Հազարաւոր ժարդիկ սովամահ պէտք է լինիս:

—Իսկ վերջինը զառնադոյնն է. բանտեր, տանջանքներ, ևլլազաններ:

Հրապարակը թնդաց լաց ու շիւանով: Շատերը շորեն էին պատառուտում, կրծքները ծեծում բռունցըով: գլխներից բռնում և մազերը փետում: Միկնոյն ժամանակ զինուորները

շրջապատում էին ամբոխին և լրտեսների ցուցմունքով շատերին տեղն ու տեղը կալանաւորում էին: Զինուորների միւս մասը տներն էր մանում և բոլոր կառկածաւորներին յափշտակում—տանում: Երեկոյեան գէմ բանգերը լեփ—լեցուն էին: Սկսուեցաւ հարցմունքներ, տանջանքներ և հարթերաւոր մարդեկ հէնց այստեղ մահուան դատապարտուեցան: Խոկ զիշերը հրապարակում պատրաստութիւն էին տեսնում մահուան պատիժներ տալու: Պատրաստում էին կառափման տեղեր, խարոյիներ, ամրացնում էին սղոցելու գործիքներ:

Առաւոտը բացուեցաւ: Երկինքը մռայլ էր. քաղաքի վրայ կախուած էր ու ամպ և երեկ պատրաստում էր արցունք թափելու:

Ելլերինը և Կեսարը կուսակալի պալատից գուրս դարով քաղաքի գլխաւոր փողոցով ուղևորուեցան դէպի կառափման տեղը: Փողոցը դատարկ էր. ոչ ոք չէր երեւում! Ոզի մէջ տիրում էր ինչ որ երկեւզ. միայն լուռում էր ելլերինը և Կեսարի պահակ զինուորների ոտների տրոփիւնը:

Յանկարծ հեռու էր երգեցողութեան ձայն լոռեց: Թէ ի՞նչ էին երգում չէր կարելի հասկանալ, բայց, ոքան լուռում էր, երգողները շատ էին: Երգեցողութիւնը մէկ ցածրանում, մէկ բարձր էր հնչում, կարծես փոխ-փոխ էին երգում: Այնպէս էր թւում որ մի քանիսը երգում են, միւսները ձայնակցում:

—Այս ի՞նչ երգեցողութիւն է, ուսերը վեր քաշելով ասաց ելլերինը. կարծեմ երգելու ժամանակ չէ: —Կեսարը լարեց լսողութիւնը:

—Ազօթքի է նման. արգեօք չե՞ն թաղում մէկին:

—Նատ բարձր են երգում. ձայներ էլ շատ են լուռում.

Երգեցողութիւնը քանի գնում աւելի որոշ էր լուռում: Ձայնը դալիս էր Անտիոքի շրջապատի լեռներից: Նոյն իսկ կարելի էր ընդհանուր եղանակը ևս հասկանալ: Քիչ ժամանակից կողքը փողոցներից՝ հեռուում երեացին և երգեչները: Նրանք դուրս եկան լայն, լսիտ կարգերով և շուտով ըռնեցին գլխաւոր փողոցի հակառակ ժայը:

Հետիոտ երգողները իրանց առաջ տեսնելով նորեկ բարձրաստիճան պաշտօնեաներին՝ շրջապատուած փառահեղ հետեղըներով, կանգ չառան: Նրանք գնացին ելլերինը և Կեսարի առաջ՝ շարունակելով երգեցողութիւնը.

Շուարած բարձրաստիճան պաշտօնեաները ձիերը կանգնեցրին և հարցական հայեացք ձգեցին իրանց հիմնութիւնը վրայ:

—Ի՞նչ է նշանակում այս և ի՞նչ են երգում դրանք.

Ոչ ոք ոչինչ չէր հասկանում: Քչերն էին հասկանում և

երգեցողութիւնը: Ամբոխը երգում էր տեղական, ասորական լեզուով: Երգում էին սաղմոս:

Ամենքից առաջ գալիս էր մի խումբ քաղաքում չտեսնուած, օտարոտի ծերունիների: Նրանք հալ ու մաշ էին եղած և արևակէզ, ցնցոտիներով ծածկուած, գզգուած մորուքով և բաց գլխով: Նրանք երգում էին այնպիսի խուպոտ ձայնով, որ կարծես երկարատե անդործութիւնից ժանգոտել էր.

—Մի յուոյայք յիշանս, յորգիս մարդկան, զի ոչ գոյ և նոսա փրկութիւն, ալէլուիա»: Ամբոխը նրանց բերանից առնելով ձայնեց—ալէլուիա»

Այդ «ալէլուիան» քանի գնաց անեց, անցաւ հազարաւոր ցաւալի հառաջով և հետզհետէ լսուեց հեռուում՝ ամբոխի յետերը: Եւ գեռ ևս այստեղ չէր կարուել «ալէլուիայի» ձայնը, ծերունիները առջենից շարունակեցին սաղմոս:

—Ելցէ հոգի և նոցանէ և գարձցին անդրէն և հող և յայնմաւուր կորիցեն ամենայն խորհութք նոցա, ալէլուիա. «Ալէլուիա», ալէլուիա, ալէլուիա» կրկին հազարաւոր ձայներով աղաղակեց ամբոխը:

—Երանի ում Տէր Աստուած Յակովիայ օգնական է նորա և յօյս նորա և Տէր Աստուած է, որ աջար զերկինս և զերկի, զծով և զամենայն որ ի նոսա: Որ պահէ զծմարտութիւն յաւիտեան և առնէ իրաւունս զրկելոց, տայ զհաց քաղցելոց—ալէլուիա».

Ամբոխը գոյուաց ի պատասխան—ալէլուիա».

—Մեծ է Տէր մեծ և մեծ է զօրութիւն նորա. իմաստութեան նորա ոչ գոյ բաւ. օրհնեցէր զծէր խոստովանութեամբ, սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ: Որ զգեցոյց զերկինս ամպօք, պատրաստ արար զանձրև յերկի, բուսոյց զիսոտ և լեռինս և զգալարի և ծառայութիւն մարդկան: Որ տայ անառնոց զիերակուր իւրեանց, ձագուց ագաւուց, ոյք կարգան առ նա—ալէլուիա».

Ամբոխի միջով անցաւ նոր ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա».

Ելլերինը և Կեսարը կանգնած էին կախարդուածի պէս: Այդ «ալէլուիաները», որոնք հնչուում էին փողոցի վերի՝ հակառակ ծայրից և գալիս էին իրանց հանգէպ, ծածկեցին թէ Աէոդոսի հրամանը, թէ երեկուայ տանջանքները և թէ առաջեկայ մահուան պատիժները:

Նրանք կամենում էին կրկին ու կրկին լսել հազար ձայնի «ալէլուիա»:

—Ուը են գալիս զրանք, ասաց պահակ զինուորների գըլ-

խաւորը, որ կանգնած էր Կեսարի մօտ. Նրանք այդպիսով կարող են մեր ճանապարհը բռնել, արդելել մեղ, պէտք է շատապել:

—Եւ իսկապէս, ի՞նչ ենք անում մենք, շտապով վրայ բերեց Էլլերինը, օ՞ն առաջ.

Ծերունիները երգում էին.

—Ոչ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կամեցաւ Տէր և ոչ ընդ իրանս առն հսկայի հաճեցաւ. այլ հաճեցաւ Տէր յերկիւղածուիր և ընդ այնոսիի, ոյք յուսան յողորմութիւն նորա:

Այժմ ամբոխը արդէն մօտ էր: Բոլոր առաջից եկողներին կարելի էր տեսնել: Ուշագրաւ տեսարան էր: Գնում էին նիհար, երկարամօրուս, աշքերի վրայ կախ ընկած սպիտակ ունչքերով ծերունիներ. ոմանք յենուելով ճիւղոտ գաւագանի վրայ, ոմանք էլ այնպէս, առանց գաւաղանի: Նրանց երեսի կնճռոտ կաշին լեսների քամիների և արևի կիվիչ տաքութեան աղդեցութիւնից սևացել էր. նոյնպիսի սեմոխրագոյն ստքերը մերկ էին: Նրանց չորացած ուսերը ծածկուած էին կամ մորթով, կամ ուզտի բրդից հւատած կոշտ կորով:

Դրանք ճգնաւորներ էին, շշակայ լեռների ընակիչներ: Առանձնանալով իրանց այրերի մէջ, որոնք գտնւառմ են գֆուար մատչելի լեռնագագաթների զառեկայըբերում, նրանք վաղուց անձնատուր էին եղել իրանց փակ հոգեկան աշխարհին: Նրանք լեռների լուսութեան և քարանձաւների մթութեան մէջ խորամուխ էին լինում իրանց հոգու մէջ և այնտեղ փնտրում Աստծուն այնպէս, ինչպէս ուրիշները նոյն լեռների վերի շերաերում փնտրում էին ոսկի և թանգագին քարեր:

Նրանցից շատերը տասնեակ տաթիներ Անտիոքի փողոցները չէին տեսած: Նրանք այստեղ գործ չունէին, նրանք այսքաղաքում աւելորդ էին, օտար քաղաքային աղմուկին:

Բայց այժմ ուրիշ բան էր. քաղաքի վրայ կախուած էր մահը: Ֆողովուրգը յուսահատ գրութեան էր. ով կարող էր, փախչում էր լեռները, այնտեղ փնտրում փրկութիւն, ծերերի մօտ ապաստան ինդրում: Ճգնաւորները իմացան թագաւորի ցասման գուժաբերների գալուստը, իմացան նոյնպէս նշանակուած մահուան պատիժների մասին և վճռեցին իրանց լեռներից իջնել Անտիոք:

—Գնա՞նք մահուան գատապարաւուած մեր եղբայրների մօտ, կանչում էին նրանք իրար, շրջելով այրերը և ժայռերի մէջ գտնուող աղքատիկ իրձիթները:

—Թող լինդրենք, աղերսենք նրանց փոխանակ, իսկ եթէ խնդիրներս անզօր լինին, մեռնենք նրանց համար: Անտիոքա-

ցեր երթ ճգնաւորների մօտենալու համբաւուք առան, Խմբերով ընդ առաջ եկան և նրանց հետ միասին ուղեղուեցան Ելլերիներ և Կեսարի ճանապարհը կտրելու:

Գլխաւոր փողոցի շրջապատոյտի վրայ, որ տանում էր գէպի պատիկ հրապարակը, իրար ճանդեպեցներով և ճգնաւոր ծերունիները ժողովրդի հետ: Երգեցցութիւնը լուեց:

Փողովուրգը կանգնած էր պատիկ պէս և արգելում էր փառահեղ զօրագնների ճանապարհը:

—Ճանապարհ տուէր, գոռաց պահակների գլխաւորը: Ամբոխը կանգնած էր անշարժ: Առաջ եկաւ մի ճգնաւոր. նա ամենից աւելի չոր էր, մարմնը նման էր կմախքի. կաշուի տակի ոսկորները կարելի էր համարել:

Նա շտկուեցաւ, որչափ ներում էր եւր բազմամեայ ձեռութիւնը, հաստատուն քայլերով և անվեհերութեամբ մօտեցաւ բարձր աստիճանաւորներին և ձախ ձեռքով բռնելով կեսարի ձիու սանձից, աջ ձեռքով կեսարին և Էլլերին ցոյց տուաւ գետինը: Կեսարը մտածեց թէ արդեօք նոր խոռվութիւն չի սկսուում, ծերունու ձիուց իջնելու պահանջը կոշտ յանդկնութիւն համարեց և սրից բռնեց, որ խփէ յանդուգն ծերաւուն: ծերունին այդ միջոցին լինչ որ մի բան էր ասում. բայց կեսարը ոչինչ չէր հասկանում, ծերունին խօսում էր տեղական, ասորերէն լեզուով, որ բարձրաստիճան Յոյնին անհասկանալի էր: Ամբոխը տեսնելով ծերունու գլխի վրայ բարձրացած սուրը, աղաղակեց ինչպէս վիրաւորուած վայրենի գազան:

—Մի՛ գեղչիր, սուրդ տեղը դիր. դա գարեսկեր է, Մակեդոն գարեսկերը:

Կեսարը բարձրացած աղաղակն էլ չհասկացաւ, բայց պահակ գնդի գլխաւորը իսկոյն բռնեց նրա ձեռքից: Վերջինս հասկացաւ ժողովրդի աղաղակը և կմացաւ որ իրանց առաջ կանգնած է Արեւելքի բոլոր քրիստոնեաներից յարդուած սուրը:

—Տէր իմ, կեսարի ականջին փոփսաց զօրապետը, ուաՄակեդոնն է, մեծ մենակեցը: Նա արգէն շատ ու շատ տարի է, որ իրան նեղութիւն չի պատճառառում կրակ վառելու կերակուր պատճառառելու համար: Ոչինչ չի եփում: Միմիայն չոր գարերէ, մեր խոհանոցներում շինել ենք նրա համար սեղաններ և միայն այն ենք մտածում, թէ ի՞նչպիսի համադամ զոհաբերութիւններ անենք նրան: Իսկ ինքը փորին չի ուզում ժառայել, այլ . . .

—Գիտեմ, լսել եմ, ընդհատեց կեսարը, վեր եկաւ ձիուց
և յարգոյաբար գլուխը խոնարհեցրեց Մակեդոնի առաջ: Նոյն-
պէս և ելլեթեխը, որ թանգարին հանդերձներ էր հագած, ոս-
կեայ ձեռնապաններով և ծնկապաններով էր զարդարուած,
յարգանքով խոնարհուեց գզգզուած շորերով ծերունու առաջ:

—Ի՞նչ ես ուզում, հայր, հարցուց կեսարը.

Մակեդոնը գարձեալ սկսեց մի բան ասել ասորերէն, նա-
յունարէն չգիտէր: Խօտեցաւ կուսակալը և սկսեց ականջ-
գնել Մակեդոնի խօսքերին: Վերջինս ասում էր.

—Մենք եկել ենք այնտեղից, ամպերի մէջ ցցուած լեռ-
ներից. այստեղ ուղարկուած ենք Աստուծոյ կողմից՝ յանուն-
երկնքի կամքի գաղարեցնելու ամեն մի երկրային վրէժմնդ-
րութիւն: Յետ գարձէր կայսեր մօտ և ասացէք նըան, որ Ան-
տիոքում ժողովրդի ձեռքով կործանուած պղնձէ արձանները
կարելի է վերականգնել, իսկ եթէ Թէոդոսը ոչնչացնէ թէկուդ
մի կենդանի, անձեռագործ արձան, մի մարդ, այն ժամանակ
նըան համար անհնարին կլինի վերականգնել մահուան մատ-
նուածի մի մազն անդամ: Թող ուրեմն գաղարեցնէ նշանա-
կուած անողորմ և անսիրտ ոչնչացումը ոչ թէ արդէն մեռած
թագաւորական արձանների, այլ կենդանի Աստուծակերպերի:
Մակեդոնի խօսքերը շլացրին նոյն իսկ հեթանոս կուսա-
կալին:

—Հոգւոյ որպիսի՞ ոյժ, մատածեց նա և յունարէն թարգ-
մանեց կեսարին:

Ելլեթեխը և կեսարը համաձայնեցան, որ այդպիսի խօսքերը
չի կարելի ըլսել, որ պէտք է կայսեր հաղորդել Անտիոքի նոր
բարեխօսների մատին:

—Մարդ չի կարող ձեղ կանգնեցնել, բայց Աստուծուած կա-
րող է, յիշեցին նոքա ճանապարհին Ֆլաւիանի խօսքերը և թեթե-
շունչ քաշեցին:

—Ի՞նչ անենք ուրեմն, հարցուց կուսակալը:

—Առ այժմ պատիժները յետաձգենք և կրկին հարցնենք
կայսեր:

—Իսկ ով է հարցնելու, ով կյանդգնի գնալ Պօլիս կայ-
սերական կամքի փոփոխման համար խնդրելու, դարձեալ հարց
առաջարկեց կուսակալը:

—Ե՛ս, հաստատապէս առաց կեսարը, Մակեդոնը ի՞մ
ձիուն կանգնեցրեց, ինձ դիմեց խօսքով՝ ուրեմն ես էլ պէտք
է գնամ. Աստուծոյ պարզ ցուցմունքն է այս:

—Թող այդպիս լինի, համաձայնեց ելլեթեխը, բայց եթէ
մի բան պատահի, պատասխանատու ենք երկուոս: Ես պա-

Անտիռքացիք սիրու առան, սրանը ասում էին.

— Ոյժո՞ կարելի է հանդիսան լինել.

— Հիմա կայութ կլսի. գրողները հասարակ մարդիկ չեն,
այլ ոռւրբ հայրեք:

— Առակենացներն են խօսում:

— Փո՞նք Աթուծոյ, Կեսարն էլ մեր կողմն է:

— Դէ՞հ, փորձանքը անցկացաւ: Ոյժո՞ զատիկը կարող ենք
ուրախ առնել:

Անցաւ մեծ պասի կէսը և թեթևամիտ Անտիքը՝ մոռա-
նալով ոչ վաղուցուայ անհանգուստութիւնը, սկսեց Զատկի տօն
սարքելու մասին մտածել:

Որպէս հոգածար թժիշկ Յովհաննը ուշագրութեամբ հե-
տեռում էր իւր անհոգ հոգեռոր հօտի ամեն մի փոփոխութեանը
և նոր քարոզի մէջ փոխոյն և եթ ի նկատի առաւ իւր հօտի
նոր արամագրութիւնը:

— Նատերը, սովորեցնում էր Յովհաննը, ուրախանում են
և ասում իրար. «Մենք յաղթեցինք՝ մեծ պասի կէսը պակա-
սեցա: Այդպիսիներին խնդրում եմ չուրախանալ պասի կէսը
պականելուն համար, այլ թող ուշագիր լինեն ալիքոք պակա-
սել է իրանց ներսում եղած չարութեան կէսը և այն ժամա-
նակ միայն կարող են ուրախանալ և հրճուել: Ուստի և թող
ամեն մէկը մտածի թէ իր ո՞ր պականութիւնն է ուզգել և
ինչպիսի բարի յատկութիւն ձեռք բերել ի՞նչ զատ բանից է
ազատուել և ինչո՞ւ լաւացել. իոկ եթէ միայն պաս է պահել
առանց ուղղուելու, այդ բոլորովին անօգուտ է: Նա որ չէ
պահում, կարող է թողութիւն գտնել՝ պատճառելով մարմ-
նի անկարողութիւնը. իոկ ի ներքուստ չուղղուողը ի՞նչ ար-
դարացում կարող է դանել:

Դու չես պահել հիւանդութեանդ պատճառով, շատ լաւ.
սակայն ինչո՞ւ չես հաշտուել թշնամիներիդ հետ ինչո՞ւ չես
ներել նրանց, զու փոձ այս պատասխանի՞ր: Այսկեօք այսունդ
ես չես ուղում պատճառ բերել հիւանդութիւնդ: Եւ դար-
ձեալ եթէ զու որտումդ ամեցնում ես նախանձ և շարու-
թիւն, ինչո՞վ ես արդարացնում քեզ, հիւանդութեամբզ. Ֆիշգ
է, գրա պատճառը հիւանդութիւնն է, բայց ոչ մարմնի, այլ
հոգւոյ հիւանդութիւն: Եւ ահա հոգին հիւանդ է զանազան
ցաւերով, անթիւ վէրքերով: Դրանց բժշկութեան՝ ուղղելու
ժամանակն է պառը: Ահա նա վերջանում է, սակայն մենք
սժկութիւնը գեռ չենք սկսել: Եւ չենք էլ մտածում այդ
մասին: Միայն ուրախ ենք, որ ժամանակը անց է կենում,
պառը պակասում է, չուտով Զատիկ կդայ: Ի՞նչ է մեր ու-

բախութեան պատճառը. ճիշդ է Զատիկը կդայ. բայց չէ որ
մենք Ա. Յարութեան օրերին էլ կմնանք նոյն յարութիւն չա-
ռած մեռեալները մեր սրտերում:

Եւ այդպէս ամեն օր Յովհանը խօսում էր ապաշխարու-
թեան մասին: Իւր խօսքով բաղխում էր ժողովրդի սիրաը,
աշխատում էր զարթեցնել, ամբացնել լաւագոյն բարե գդաց-
մունքներ: Այդ միջոցին Ֆլաւիանը Կ. Պոլում ի զուր էր կայ-
սեր հետ տեսակցութիւն խնդրում: Թէսդոսը չափազանց զայ-
րացած խուլայոյզ Անտիոքի վրայ, չէր ուզում տեսնել իսկ
նրա ծերունազարդ հովուապետին:

— Թող յետ գառնայ, ազաղակում էր նա խեղգուելով
կատաղի ցառումից: Նրա տէրտիչը ական գործը չէ իմ կարգա-
դրութիւններին խառնուելը: Ես կուլորեցնեմ նրանց յարգել
արձաններիս: Եո կոտիպեմ նր անց գողակ լոկ իմ անունը լուելիս:

Ֆլաւիանին յայտնեցին Թէոդոսի ցասման մասին և խօր-
հուրդ տուին վերադառնալ:

— Յետ գարձե՞ր, որբազան, ասում էին պալատականները,
մենք օտար լինելով հանդերձ՝ վախենում ենք քո փոխանակ.
կայսրը զայրացած է: Նա այդպիսի ըոպէներին սարսափելի՛ է.
պալատում այդ միջոցին բոլորը զողում են նրա առաջ:

— Ի զուր, հեղաբար գլուխը շարժելով ասաց Ֆլաւիանը,
գողակ պէտք է միմիայն Առտուծոյ առաջ, իսկ կայսեր ցա-
սումը պէտք է մեղմացնել:

Պալատականները ժամացին:

— Մեղմացնէլ. Դու, սրբազան, գործը շատ միամիտ կեր-
պով ես ըմբռնում: Ո՞վ կյանդգնի որեկ բանի մէջ արգելք
հանդիսանալ կայսեր:

— Դուք բոլորդ, հաստատապէս ասաց Ֆլաւիանը, եթէ
միայն գուք կեսարի փաղաքշողներ չէք, եթէ նրա խզմակի հա-
ճոյակատարները չէք, այլ հաւատարիմ ծառաներ. Եթէ զբո-
սանքի ժամանակ կայսրը պատահմամբ գայթի, զուք բոլորդ
վագ էք տալիս նրան բռնելու, որ չընկնի. ի՞նչպէս էք ուրեմն
թոյլ տալիս, որ նա ընկնի ցասման անմտութեան մէջ, չէք
բռնում նրան, չէք թուլացնում նրա անկման ոյժը:

Պալատականները ուսերը վեր դցեցին, զարմացական հա-
յեաց ձգեցին Ֆլաւիանի վրայ և ցըսեցին. Նրանք մտածում
էին:

— Յարօթինակ մարդ է, կարծես վոքը երեխայ լինի:

— Հի՞ն միամիտներից է:

— Այդ գաւառացիները բոլորը այդպէս են երեակայում
գործը. Այդ փորձիք, մէկ գնա մտած:

— Միժմսերը կվերացնեմ մինչև նոր վճիռը: Հէնց պյդպէս էլ ասս'
Ա. Պոլոսում այն գէպօռում, երբ անբաւականութիւն ծագի
գործի այս տեսակ ընթացք ոտանալու պատճառով:

— Շուտով հասիր հրապարակ, յանձնաբարեց նա պահակի
գլխաւորին և ասա: «Այսօր մահուան պատիթ չել լինել». Թող
դատապարտեալներին կրկին յետ տանեն բանտ: Նրանց հա-
մար կայսեր նոր դիմում կլինի:

Ֆողովորդը ճանապարհ բաց արաւ և պահակի գլխա-
ւորը ձիով հասաւ հրապարակ. իսկ բարձրադատիճան պաշտօ-
նեաները և նրանց հետեւորդները գարձան յետ: Նրանց հետեւ-
ցին ճգնաւորները ժողովրդի հետ: Կեսարը խնդրեց նրանց,
որ իրանց կողմից մի նամակ գրեն Թէոդոսին: Այդ միջոցին երկնքի
մի մասում ամպերը ցանցառացան և գարնանային պայծառ
արեգակի շողշողուն լոյսը թափանցեց երկրի վրայ, անցկացաւ
հաղարաւոր ամբոխի միջով և կանգ առնելով խայտաց բարձ-
րաստիճան պաշտօնեաների ոսկեայ ոտղաւարտների վրայ:

Երկինքը ժպտաց. արեգակը խայտաց ուրախութեամբ.
Խօսում էին ժողովրդի մէջ: Իսկ ճգնաւորները նոր սաղմոս էին
երգում.

— Գովեա՛ Երուսաղէմ զծէր և օրհնեա՛ զԱստուած քո Սիօն.
Զի զօրացոյց զնեգոս գրանց քոց և օրհնեաց զօրդիս քո ի քեզ.
Որ եղ զոտհմանո քո ի խաղաղութեան, պարապատութեամբ ցո-
րենոյ լցոյց զբեզ: Որ տռաքէ զբան իւր յերկեր, վաղվաղ ըն-
թանան պատգամք նորա—ալէլուիա՛:

Եւ հաղարաւոր ձայներ այժմ ուրախ ձայնեցին-ալէլուիա՛:

Թէկ քաղաքի հրապարատկում տեղի ունենալիք մահուան
պատիթի առժամանակեայ վերացումը մի փոքր հանգստացրեց
շատերին, մանաւանդ դատապարտաւածների մերձաւորներին,
սակայն քաղաքը ընդհանրապէս վհատուած էր, բոլոր տըլ-
սութեան պատճառը այն էր, որ Անտիոքը զրկւում էր իրա-
ւունքներից և առաւելութեւններից: Նրանք սովոր լինելով
ձիարշաւների, կրկէնների, զանազան տեսարանների, բաղա-
նիքներում ժամանով զրոյց անելու՝ այժմ ցաւում էին որ քա-
ղաքում վերջանում են ձիարշաւները, փակւում կրկէններն ու
բաղանիքները:

Յովհան Առկերերանը՝ ցաւելով քաղաքացւոց այդպիսի
փոքրովութեան վրայ, որ քաղաքի այդ ծանր օրերում իսկ
աւելի մտածում էին դատարկ զուարճութեանց և արտաքին
գովասանութեան մասին, քան իրանց ներքին հոգեկան վերա-
նորոգման մասին, ունիքիքներին դիմեց նոր քարոզով:

— Դուք ցաւում էք որ ձեր քաղաքը զրկւուած է առա-

ւելութեւններից: Բայց որ հասկանաք թէ լինչումն է կայտանում քաղաքի առաւելութիւնները, այն ժամանակ պարզ կերպով կատեսնէք որ եթէ դուք, քաղաքում ապօպներդ, չու չընչացնէք այդ առաւելութիւնները, ուրիշ ոչ ոք չէ կարող նրանց խլել ձեր ձեռքից: Հասկացէք ո՞ն քաղաքի զարդը և ապահովութիւնը կաղմում է ոչ թէ նրա մեծութիւնը, այլ քաղաքացիների հոգեկան արժանաւորութիւնը:

Ինձ համար այն քաղաքը, որի միջից բացակայ են Առտուածասէն ընակիչներ, յետ ընկած գիւղից էլ վատ է, գատարկ այրեսից էլ անփառունակ, թէև թադաւորներից հաղարաւոր պատիւներ ստանայ: Հետեւապէս եթէ ուղում ես գովել քո քաղաքը մի՛ խօսիք նրա դլխաւորութեան մասին և ոչ նրա սրանչելի արուարձանն, Դաֆնայի մասին. ոչ նոճիների մեծութեան ու շատութեան և ո՛չ քաղաքի բազմամարդ լիւնելու մասին: Մի՛ խօսիք և այն մասին, որ քաղաքը ունի փառահեղ և գեղեցիկ շնութիւններ, կամ բազմաթիւ կոթողներ, ընդարձակ որահներ և զուարձութեան վայրեր, սրտեղ ապահով կերպով կաթելի է մինչեւ ուշ գիշես մնալ: Մի՛ խօսիք և առեւտրական ապրանքների շատութեան մասին. այդ բոլորը արտաքին բաներ են: Զեղ համար ըոլորսիլին կողմնակի, օտար բաներ: Այդ բոլորը քար է, փայտ, ցնցոտի, մետաղ: Այն ձեր շրջանակն է, արձանների պատուանդանը. իսի շըշջանակի միջի պատկերը, պատուանդանի վրայի արձանը՝ ինքներդ էք, ձեր ներքին աշխարհը, ձեր հոգին, ձեր մտքերը, ձեր զգացմունքները: Թոյլ առուէք ինձ հեռանալ այդ պատկերով, իսկ եթէ նրա չորս կողմը շրջանակ կայ թէ չէ և եթէ կայ ինչպիսի՞ է-այդ ինձ համար միւնոյնն է: Ես կուզենայի պարծենալ ձեր մեծ հոգիների առաւելութիւններով, գեղեցկութիւններով և գլխաւորութիւնով, ձեր սրտի հարստութիւնով: Պարծեցէք, եթէ կարող էք, ոչ թէ ձեր հրապարակներում գտնուող թէկուզ մաքուք ոսկուց ձուլուած արձաններով, այլ Աստուծոյ պատկերով, որ փայլում է ձեր մէջ: Ահա այդ կլինի ձեր արժանիքը, այդ կլինի քաղաքի առաւելութիւնը: Սակայն այդ ոչ ոք չե կարող պարգևել ձեզ և ոչ խլել ձեղանից: Միայն գուք կարող էք նրան ձեռք բերել, կորցնել, պահպանել և կամ աւելի՛ ևս մեծացնել:

Այդպէս էր քարոզում Յովհանը Անտիռքացւոց շարունակաբար:

Կեսարը յետ դարձաւ կ: Պոլիս՝ ապստամած և արդէն իսկ գատապարտուած Անտիռքի համար նոր մեջնորդութիւն անելու: Այս անդամ ինդը տակ ստորոգը էլ էլու շրջակաց լեռնարենի ճգնաւորները:

զնուն արտասուրը և սեացած վիշտը: Երեսդ մի՛ դարձնել, արքայ: Դու միայն կարող ես ցամաքացնել այդ արտասուրը և գտանութիւնը գարձնել քաղցրութիւն: Նատ վաղուց չէ որ անցեալ Զատկի տօներից մէկին դու ամենուրեք հրաման ու զարկեցիս բոլոր բանտարկեալներին արձակելու և նրանց յանցանքը ներելու: Եւ կարծես այդքանը բաւական չհամարելով քո մարդասիրութիւնը ցոյց տալու՝ դու գրում էիր.

—Ո՞հ, ի՞նչ երանի կլինէր եթէ Տնար ունենայի յետ կանչել և մեռածներին ու մահուան պատիք կրածներին յարութիւն տալ:

Ցիշի՛, արքայ, այդ խօսքերը այժմ: Ահա իսկ ժամանակն է կոչել, յարուցանել, կեանք տալ հաղարաւու մարդկանց: Խաղաղ կեանք պարզեցիս, արքայ, քաղաքին. կենդանացունը նրան. կատարի՛ աւելին քան կատարեց Մեծ Անտիռքը՝ հիմնելով Անտիռք քաղաքը, թող այժմ ըստ քո մարդասիրութեան անուանուի թէոդոսիա:

Անտիռքը քաղաքին ոկեղը տուաւ և հեռացաւ, իսկ քո մեծութիւնը այն կլինի, որ վերականգնես նոյն Անտիռքը, որովհետեւ նա Արևելքի փառքն ու պարծանքը դառնալուց յետոյ՝ անմտութիւն ունեցաւ ընկնել: Եթէ նրան ալիքին բարը ազգերը կամ յարձակում գործէր որ և է այլ թշնամի, դու կշտապէիր ազատել նրան. դա փառաւոր գործ կլինէր, բայց ոչ այնքան զարմանալի, որքան այժմ, երբ դու ներես նրան, պաշտպանես քո սեպհական ցասումից: Դու ասում ես, որ քո կրած անպատութիւնը կլարդական պախութիւնը ոչ մէկը չի կրել, բայց եթէ ուզես, մարդասէր արքայ, այդ անպատութիւնը կլարդական քեզ այնպիսի պամկուլ, որը աւելի լաւ և աւելի փառաւոր կլինի քան արքայական պահեկ: Քո ճակատը զարդարող պատկեր ոսկակը հիւսած է նուրբ, ոսկեայ թերթիկներից, իսկ այն պատկեր, որը աստօնաբիում եմ քեզ, հիւսած կլինի քո մարդասիրութիւնից: Եւ բոլորը պէտք է հիւսած կլինի քո պատմակի թանգարդին քարերին նացելով, որքան պէտք է գովարանեն քեզ ցամանդ յաղթելուդ համար: Քանդեցի՞ն քո արձանները, բայց դու կարող ես կանգնեցնել աւելի ևս փառաւորները: Եթէ դու ներես քեզ վիրաւորողներին և չենթարկես ոչ մի պատմի, այն ժամանակ նրանք քեզ համար կկանգնեցնեն ոչ թէ պղնձէ, կամ ոսկէ և կամ քարէ սիւն հրապարակում, այլ այնպիսին, որ աւելի թանգարժէ քան որ և է նիւթ. նրանք կշրջապատեն քո անունը մարդասիրութեան և ողորմածութեան լոյսով: Նրանցից իւս ըստանչեւը քեզ իւր մէջ կկրէ և դու կունենաս ոչ միայն

Անտիռքում և ոչ քո տէրութեան մէջ միայն, այլ ամբողջ մարդկաւթեան մէջ այնքան արձան, որքան մարդ որ իմանայ քո անունը և մեծահոգութիւնը: Ոչ միայն մենք, այլ և մեր յետնորդներն ու նրա սերունդները՝ կլուեն այդ մասին, կոքանշանան, կովեեն քեզ այնպէս, որպէս թէ իրանք վայելած լինէին այդ բարեկործութիւնը:

Թէոդոսը Ֆլաւիանի խօսքերից տրտասուելու չափ սրտաշարժուեց և երբ ծերունի եպիսկոպոսը խօսքը վերջացրեց, կայսը մօտեցաւ նրան, փաթաթուեց և համբուրեց: Յետոյ յետքաշուեց, բայց Ֆլաւիանի ձեռքը բաց չժողղեց և սիրով նայելով նրա կնճռատած դէմքին և արտասուաթոր աչքերին, ասաց.

— Բարի հովիւ, նախ քան ինձանից Անտիռի համար ողորմածութիւն ստանալու դու ինքդ ինձ մեծ ողորմութիւն ցոյց տուիր. այնպէս գթաշարժեցիր ինձ այս սովէիս քո խօսքերով, այնքան բարի, լաւ զգացմունքներ զարթեցըթիք: Իմ պալատում ոչ ոք այդպէս չե խօսում ինձ հետ: Զայրանալու, վրէժինդիր լինելու, պատմելու մէջ բոլորը օգնական են, բայց ինքդ քեզ հանդարտեցնելու, կրածդ անպատճութիւնը մոռացութեան տալու, արքայական ներողամութիւն ցոյց տալու նոյն իսկ գէպի յանցագործները՝ այդ գործերում մենակ ես, ոչ ոք չկայ: Ոչ ձեռք կայ, ոչ լեզու, ոչ սիրա, ոչ միտք և ոչ ցանկութիւն:

Ո՞հ, Սրբազն հայր, երբեմն շատ ծանր է այս նուրբ ոսկեայ պոակը, որի մասին դու խօսեցիր: Ուժու չե ներում մենակ տանելու: Եւ դու, հայր, այսօր ինձ մեծ թեթեւութիւն տուիր, և' միսիթարութիւն և' խրատ... խօսք չեմ գլունում քեզանից շնորհակալ լինելու: Եւ քո խօսքից յետոյ մի բան միայն կարող եմ ատել Անտիռացւոց մասին: «Ի՞նչ զարմանալի և մեծ բան է, երբ մենք չենք զայրանալ մեզ վերաւորողի վրայ, մարդկանց վրայ. ո՞վ ենք մենք, նոյն մարդը և այդ այն ժամանակ, երբ Յիսուս Քրիստոս, Աստուծոյ Որդին՝ աշխարհ գալով և մեզ համար ծառայել կերպարանք ստանալով խաչուեցաւ այն մարդկանց ձեռքով, որոնց միայն լաւութիւն էր արել և նա այդ խաչոների համար Հօր աղօթեց տանով: «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»:

Ծերունի եպիսկոպոսը նորից արտասուեց, այդ անդամ ուրախութիւնից: Նա շնորհակալ էր լինում:

— Ա՛րքայ, ես եկել եմ քեզ մօտ ողորմածութիւն, ներոշամտութիւն ինդըելու, դու աւելին տուիր մեզ: Դու տուիր ժողովրդի անմտութեան թողութիւն և կատարեալ մոռացում: Այդչափ մեծ չէին մեր յայսերը, բայց ես ասում եմ քեզ,

Ֆլաւիանը տէղից չշարժուեց: Նա ասում էր.

— Ձեմ հեռանայ: Ձեմ ուզում յօյսո կարել, կայսեր սիրա հպատակների համար պէտք է արեգակ լինի. Նա չի կարող յաւետեանս մուայլ մնալ ցասման ամպերով:

— Դու, սրբազ սն, գեռ ևս երկար կոպասես, հեգնութեամբ նկատում էին նրան:

— Թո՞ղ. ինձ համար աւելի հեշտ է այստեղ մենակ մեռնել, հեռու իմ հոգեով հօտից, իմ սրտակից մարդկանցից, քան վերադառնալ և ի դերե հանել Անտիռի յօյսը:

Երբ կեսարը Անտիռից և, Պոլիս հասաւ, Ֆլաւիանի գըութիւնը իսկոյն փոխուեց:

Կեսարը կատարեց հէնց այն, ինչ որ Ֆլաւիանը պահանջում էր Թէոդոսի շրջապատող պատասկաններից: Կեսարը մեզմայրեց կայսեր սիրա:

Նա մանրամասնօրէն զեկուցեց Թէոդոսին, թէ ինչպիսի սարսափ է պատճառում այդ բոլորը քաղաքին:

— Անտիռացիք արդէն բաւականաչափ պատժուել են երանց յանցանքի վիխարէն, վախում եմ, թագաւոր, որ դու այժմ աւելի մեծ ցաւ պատճառես նրանց քո արտակարգ պատիժներովդ:

Յետոյ նա խորապէս սրտաշարժուած պատմեց ծերունի ճգնաւորների բարեխօսութեան մասին և կարգաց նրանց միջնորդութեան թուղթը:

— Թագաւոր, զըում էին ծերունիները, մենք քեզանից սպասում ենք իսկական արքայավայել գործ: Յանցաւորներին պատժելը, նրանց յանցագործութեան համար տուգանքի ինթարիկելը հեշտ է և յարմարաւոր: Այդ կարող է անել ամեն ոք: Մեծ քաջութիւն չէ նաև ողորմածութիւն սփուել երկը վրայ ուրախութեան և ընդհանուրը ցնծութեան օրեսում. գըանում ոչ մի զարմանալի և անսովոր բան չկայ: Դա սովորական բան է: Բայց տանել, ինչպէս դու, այդքան մեծամեծ բական բան: Մի թափիք ուրեմն, թագաւոր, ցասումդ Անտիռի վրայ: Զայրացած ձեռքով գէն մի՛ հըել ժողովրդի սիրա քեզ հետ կապելու յարմար առիթը: Դու, կմաստուն կառավարիչ, կապելու յարմար պէտք: Տուք ուրեմն, է ոչ թէ հպատակների վախով, այլ սիրով: Տուք ուրեմն, կայսը, մեզ քո սէրը. ցոյց տուք նրան ժողովրդին և ժողովուրդը կհատացանէ քեզ հարեւրագատիկ:

Թէոդոսը լոելով կեսարի ողեզուած պատմութիւնը

ճգնաւորների և նրանց թղթի մտոին՝ մեղմացաւ:

— Ճշմարիտ որ Աստուծոյ լրաբերներն են: Աստուած այս արժանաւոր մարդկանց միջոցով բարեգթութեամբ պահում է իմ անարժան, չարութեան ժամանակ ոխերիմ ձեռքը: Ընդունում եմ նրանց ցուցումը և մեղմացնում ցասումու: Այլ ես մահուան պատիժ չել լինել: Կեսար, այսօր ինձ մօտ հրաւիրեց Անտիոքի որտաքեկ հովուին, ծերունի ֆլաւիանին: Նա վաղուց է ոպասում իմ ընդունելութեանը: Խոկ քեզ և էլւիրելին յայտնում եմ իմ մեծ չնորհակալիքը: Գուք ոչ թէ իմ փոփոխական կամքի կոյք կատարողներ եղաք, այլ իմ իուկական օգնականներ. Գուք իմ բանականութեւնն ու խեղճն եղաք, չարսափեցներ կրկին հալցնել արդեօք արդար դործ եմ յանձնել ձեզ: Ո՞չ, որքան երանի լինէր, եթէ իմ գահի մօտ շատ լինէին այսպիսի ժառաներ: Ո՞րքան հարկաւոր են նրանք և որքո՞ն գժուար է նրանց գտնելը:

Կեսարը ուրախացած շտապեց ֆլաւիանի մօտ:

— Սըբազան, քո խօսքը կատարուեց: Աստուած մեղմացրեց արքայի սիրտը. կայսը հէնց այսօր հրաւիրում է քեզ իւր մօտ:

Ֆերունին գողոջուն ձեռքով սկսեց երեսը խաչակնըել.

— Արդ, արձակեա՛ զժառայու քո, Տէր, ի խաղաղութիւն: Կայսեր տեսակցութիւնը ձերունի եպիսկոպոսի հետ խիստ սրտագին էր: Խնձպէս Անտիոքում գուշակել էր Յովհանը խոնարհ և հեզ ծերունին կայսեր առաջ կանգնելուն պէս հեկաց:

— Աերթ՛, արքայ, ներթ՛, խնդրում էր նա թոյլ, զառամետ ձայնով և արտասուք թափում ու հեծկլում: Կարծես Անտիոքում կատարուած սարսափները իւր սեպհական յանցանքն էր: Թէոդոսը զառամեալ ձերունի եպիսկոպոսին տեսնելով այգպիսի վշտի մէջ՝ ինքն էլ քիչ էր մնում լաց լինէր: Նա այլ ևս Անտիոքին սպանանք չէր կարդում, չէր զառում նրան, նա միայն գանգատում էր եպիսկոպոսին:

— Խնչո՞ւ վիրաւորեցին իմ թանգագին ննջեցեալների յիշատակը: Եթէ ես մի բանով ցաւ էի պատճառել նրանց, թող ինձանից վրէժինդիր լինէին. իսկ մեռածներին, որսնցից ոչ մի վնաս չէին տեսել, պէտք է խնայէին:

Ֆլաւիանը լուռ, զառնագին լալիս էր. մի փոքը հանգարտելով ասաց:

— Աերթ՛, մեծ արքայ. իմ սիրտը լի է ցաւով ու վշտով, իսկ մտքերս շփոթուած են, իմ խօսքերը կլինին անկատ: Այն էլ ասեմ, որ գեղեցիկ խօսքեր չեմ բերել քեզ, այլ ժողովրդե

այդ միայն համապատասխան է քո բարձր գլուխն: Եւ ես ուշախ եմ ովչափ Անտիռքի, նոյնչափ ևս քեզ համար. քեզ համար ևս առաւել, որովհետև ողորմութիւն անելը աւելի մեծ երջանկութիւն է քան սատանալը: Թող Աստուած պահպանէ քեզ, մըքայ, երկար ու երկար տարիներ և մարդասիրութիւնը թող մ'նայ քո մէջ և բարեբաղդութիւն քո ժաղովրդի:

Ֆլաւիանը կայսեր մօտից դուրս գալուն պէս շաապով մի ձիւաւոր սուրճանդակ ուղարկեց Անտիռք լիովին իներման մասին աւետիք տալու:

Անտիռքը կենդանացաւ: Հրապարակները դարդարուեցաւ ծաղիկներով. աների առաջ գորգեր փուռեցին. փողոցների անկիւններում երեկոյեան պայծառ լուսավառութիւն էր լինում. բոլորը ուրախ էին. կարծես քաղաքը վերածնւում էր: Յովիանը, բայ չթողեց ժողովրդի այդ ուրախ տրամադրութիւնը, նա ասում էր:

— Նոյնը արէք և ամեն ժամանակ, բայց ուրիշ կերպ: Զարդարուեցէք ոչ թէ ծաղիկներոց հիւսած պակներով, այլ առաքինութեամբ. ձեր հոգու մէջ վառ պահեցէք Աստուածային արդարութեան լոյսը և հրճուեցէք հոգեար ուրախութեամբ ոչ միայն նրա համար, որ Աստուած վերջ դրեց այս թշուառութիւններին, այլ և շնորհակալ եղէք այս փորձանքների համար: Այս գժբաղդութիւնը ոչ միայն մեզ համար օգտակար պիտի լինի, եթէ միայն միշտ մտարերելու լինենք, այլ և մեր յետագայ սերունդներին: Թող ամեն մէկը մտածէ թէ ինչ բան է այս: Մեր որդիքը կլսեն, որ երբ մի այնպիսի մեծ քաղաք պատժի և վրէժինդութեան ենթարկուեցաւ, երբ բոլորը գողում ու սարսափում էին, երբ թէ զօրապետներ, թէ քաղաք ավետներ և թէ գատաւորներ չէին համարձակւում ձայն առաջ թշուառների համար—ահա այն ժամանակ մէն մենակ առաջ եկաւ Աստուածոյ միջնորդը, հոգեար հայըը և լոկ իւր կերպարանքով ու պարզ, անպանոյն խօսքով փոխեց ինքնակալի միտքը: Եւ թագաւորը և յարգանս աստուածային պատուէրի տուաւ ժերունուն այն, ինչ որ չէր տուել իւր հպատակներոց ոչ մէկին:

Այս բոլորի մասին խորհելով թող միշտ շնորհակալ լինենք Աստուածոյ ոչ միայն անբաղտութիւնները անցնելուց յետոյ, այլ հէնց նրանց պատահելուն համար, որովհետև Աստուած ամեն ինչ կարդագրում է յօդուտ մեզ. նոյն իսկ մեր ձեռքով կատարուած չարութիւնը փորձանքների բովից անցկացնելով դարձնում է մեզ համար խրատ:

Մի քանի օր անց, Զատկի օրերին Ֆլաւիանը վերադարձաւ: Հեռաւոր և գժուարին ճանապարհը նրա առողջութեան համար բարեյաջող էր անցել: Ուրախ իւր միջնորդութեան շանկալի յաջողութեամբ՝ նա ինքն իրան աւելի առոյդ էր զգում:

Գարուն էր: Կենդանաբար օդը լցաւած էր նորաբաց ձմռավիկութիւնը անուշահոտութեամբ և սրտաշարժուած ծերունին ամբողջ ճանապարհին հրծւում էր:

—Գարուն է. նոր կեանք, բնութիւնը զավթում է, ամեն ինչ կըկին կենդանութիւն ստանում: Հինք, զառամածը, ովք ժամանակին պտուղ է տուել, իւր գործը կատարել, հեռանում է կեանքից, մեռնում է և նրա վոխալէն ձմեռուայ հանգստութիւնից յետոյ բնութիւնը բերում է նոր կեանք. Ա' ժառերի նոր բողըններ, և' նոր ժապիկներ, և' նոր թեսաւորուած երգիչներ և բայ երեւթիւն նոր օդ և այլն: Ո՛հ, որչափ որանչելի է. փառք Ստեղծողին որ այսպիսի իմաստութեամբ ստեղծել է կեանքը: Այժմ օ՛ն գէպի հանգիստ: Երկրայինը բոլոր կատարեցի, այժմ գէպի նոր ճանապարհ առ Աստուած.

Այնտեղ նոր կեանք է, վերտանունդ, նոր գարուն:

Եւ ծերունին սայլի յատակին պատկած ժամերով աչքերը յառած նայում էր գարնանային պայծառ, կապուաակ երկնքին:

Անտիբացեք իմանալով իրանց հավատի գալստեան օրը՝ ֆաղկագագռին, առաւտօնեան վազ, ամբողջ քաղաքալ գաւռն եկան ընդ առաջ: Նըմանք ճանապարհին մինչև եղիսկոպոսական տունը անընդհատ թնդացնում էին օդը ուրախ աղաղակով, արմաւենու ճիւղեր էին շարժում, ծաղկիներով ճանապարհը ժածկում: Մայըերը տարածում էին ձեռքերը և աղաղակում:

—Մեր պաշտպանը, մեր պահապան հրեշտակը. Աստուծոյ միջնորդը: Ծերունին ուրախ ողջունում էր բոլորին և կըկնում—Այս իմ ժառայութիւնը չէ, այլ Աստուծոյ ողորմութիւնը. Ես ոչ մի բանով գործին չեմ նպաստել: Երբ Աստուած թագաւորի սերտը մեղմացրեց, նա ինքը մինչև իմ արտասանելը թողեց իւր ցասումը, վերջ տուեց զայրացմանը և խռովութեան մասին խօսելով՝ բոլոր պատահածները յեշում էր առանց բարկութեան, կազմէս ինքը չէր վիրաւորուովը, այլ մի ուրիշը: Ես այսուեղ ոչինչ չեմ արել. ամեն ինչ կարգադրում է Աստուծոյ բարի կամքը: Փառք տուէք Աստուծուն, իմ որդիք. Երգեցէք նրա անունով, «ովսաննա».

Եւ հաղարաւոր տմբոխը արձագանք տուաւ.

«Ովսաննա, ովսաննա ի բարձունս, օրհնեալ եկեալ յաւնուն ծեառն»:





ՀՀ Ազգային գրադարան



NL0312866

12.846